ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾԱՆՈՑԱԳԻՐ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, Davis Health

Սույն ծանուցման միջոցով տրամադրում է տեղեկություն այն մասին, թե ինչպես կարող ենք օգտագործվել և հրապարակվել Ձեզ վերաբերվող պաշտպանված առողջապահական տեղեկությունները:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

UC Davis Health

UC Davis Health-ը Կալիֆորնիայի Համալսարանի առողջապահական բաղադրիչներից մեկն է: Կալիֆորնիայի Համալսարանի առողջապահական բաղադրիչներն ընդգրկում են UC բժշկական կենտրոնները, բժշկական խմբերը, կլինիկաները և բժիշկների գրասենյակները, UC բժշկական և այլ առողջապահական մասնագիտական դպրոցները: Բոլոր նշված վայրերում առողջապահական ծառայությունների մատուցմանը աջակցող վարչական և գործառնական ստորաբաժանումները նույնպես Կալիֆոռնիայի Համալսարանի առողջապահական բաղադրիչներ են:

ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ

UC Davis Health-ը պարտավորվում է պաշտպանել ձեր բժշկական և առողջապահական տեղեկությունների գաղտնիությունը: Մեր վրա օրենքով դրված է պարտավորությունը՝ պահպանել ձեր առողջության տվյալների գաղտնիությունը: Մենք պարտավորվում ենք պահպանել այս ծանուցագրում (“Ծանուցագիր”) նկարագրված իրավական պարտականությունները և կպահպանենք գաղտնիությունը:

ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դուք ունեք հետևյալ իրավունքները ձեր առողջության վերաբերյալ այն տեղեկությունների նկատմամբ, որոնք մենք պահպանում ենք:

Տեսնելու և պատճենելու իրավունք: Դուք իրավունք ունեք տեսնելու կամ ստանալու Ձեր առողջության տվյալների պատճենը՝ որոշ բացառություններով: Եթե տվյալները պահվում են էլեկտրոնային ձևաչափով, Դուք իրավունք ունեք ստանալու Ձեր առողջության տվյալները էլեկտրոնային ձևաչափով, եթե դա հնարավոր է: Եթե ոչ, մենք կփորձենք գտնել լուծում, որպեսզի Դուք տեղեկատվությունը ստանաք էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

Ձեր հարցումը պետք է ներկայացվի գրավոր և ուղարկվի հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

Էլ. հասցե՝ roi@health.ucdavis.edu
Ֆաքս՝ (916) 734-2126
Փոստային հասցե՝ Health Information Management, 2315 Stockton Blvd. Sacramento, CA 95817

Այս հարցման ձևաթուղթը հասանելի է UC Davis Health-ում և առցանց՝ https://health.ucdavis.edu/him:

Եթե անհրաժեշտություն առաջանա ստանալ թղթային տարբերակը, հնարավոր է սահմանվի ողջամիտ, ծախսերի վրա հիմնված վճարում: Դուք կարող եք նաև պահանջել, որ Ձեր առողջության վերաբերյալ տվյալների պատճենը կարող է տրամադրվել Ձեր ընտրած երրորդ անձին:

Եթե կարծում եք, որ ձեր առողջության վերաբերյալ տեղեկությունները սխալ կամ թերի են, կարող եք դիմել մեզ՝ դրանք փոխելու կամ լրացնելու համար, որպեսզի ձեր տվյալները լինեն ամբողջական:

Ձեր դիմումը պետք է ներկայացվի գրավոր ձևով և ուղարկվի հետևյալ եղանակներից մեկով.

Էլ. հասցե՝ roi@health.ucdavis.edu
Փոստային հասցե՝ Health Information Management, 2315 Stockton Blvd., Sacramento, CA 95817

Այս պահանջի ձևաթուղթը կարելի է գտնել UC Davis Health-ում և առցանց՝ https://health.ucdavis.edu/him:

Մենք կարող ենք մերժել Ձեր պահանջը, սակայն գրավոր կհայտնենք մերժման պատճառները:

Ձեր իրավունքները Դուք իրավունք ունեք իմանալու, թե ինչպես ենք մենք կիսվել ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությամբ: Դուք իրավունք ունեք պահանջելու ցուցակ (հաշվետվություն) այն դեպքերի վերաբերյալ, երբ UC Davis Health-ը փոխանցել է ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությունը այլ անձանց կամ կազմակերպությունների, օրինակ՝ պետական գործակալությունների: Ցուցակը չի ներառի բուժման, վճարման կամ առողջապահական գործունեության վերաբերյալ տեղեկության, ինչպես նաև այն տեղեկությունը, որ դուք խնդրել եք գաղտնի պահվի: Դուք կարող եք պահանջել դիմումը ներկայացնելու պահից մինչև 6 տարվա վաղեմության տեղեկատվություն տրամադրում:

Ձեր պահանջը պետք է լինի գրավոր և ներկայացվի հետևյալ հասցեով.

Փոստային հասցե՝ Health Information Management, 2315 Stockton Blvd. Sacramento, CA 95817

Հարցման ձևաթուղթը հասանելի է UC Davis Health-ում և առցանց՝ https://health.ucdavis.edu/him:

Եթե 12 ամսվա ընթացքում հաշվետվություն եք պահանջում մեկից ավելի անգամ, հնարավոր է, որ ստիպված լինենք գանձել ողջամիտ, ծախսերի վրա հիմնված վճար:

Սահմանափակումներ պահանջելու իրավունք: Դուք իրավունք ունեք խնդրել, որպեսզի մենք սահմանափակենք բուժման, վճարման կամ առողջապահական գործունեության վերաբերյալ տեղեկատվության օգտագործումն ու փոխանցումը այլ անձանց: Եթե դուք ամբողջությամբ ինքներդ եք վճարել ծառայության կամ առողջապահական ծառայության համար, կարող եք խնդրել, որ մենք որ այդ տեղեկատվությունը չկիրառվի և չկիսվի վճարումների կամ մեր գործունեության նպատակներով:

Ձեր պահանջը պետք է լինի գրավոր և ներկայացվի հետևյալ հասցեով.

Փոստային հասցե՝ Health Information Management, 2315 Stockton Blvd. Sacramento, CA 95817

Հարցման ձևաթուղթը հասանելի է UC Davis Health-ում և առցանց՝ https://health.ucdavis.edu/him:

Գաղտնի հաղորդակցություն պահանջելու իրավունք: Դուք իրավունք ունեք պահանջել, որ մենք ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությունը ձեզ ներկայացնենք Ձեզ հարմար եղանակով կամ Ձեզ հարմար վայրում: Օրինակ՝ դուք կարող եք պահանջել, որ մեզ հետ հաղորդակցումը կատարվի միայն ձեր բնակարանում կամ միայն փոստային եղանակով: Ձեր պահանջը պետք է ներկայացվի գրավոր ձևով՝ հետևյալ հասցեով՝

Փոստային հասցե՝ Health Information Management, 2315 Stockton Blvd., Sacramento, CA 95817

Մենք կընդունենք բոլոր տրամաբանական պահանջները:

Իրավունք ստանալ այս ծանուցման թղթային տարբերակը: Դուք կարող եք ցանկացած ժամանակ պահանջել այս ծանուցագրի թղթային օրինակ, նույնիսկ եթե համաձայնվել եք ստանալ այն էլեկտրոնային տարբերակով:

Ծանուցագրի օրինակները հասանելի են UC Davis Health-ի բոլոր ստորաբաժանումներում կամ կարող եք վերցնել այն մեր կայքից՝ https://health.ucdavis.edu/him:

Խախտման մասին տեղեկացվելու իրավունք: Դուք իրավունք ունեք տեղեկացվելու այն դեպքերում, եթե մենք հայտնաբերենք խախտում, որը կարող է վտանգել ձեր տեղեկատվության գաղտնիությունը կամ անվտանգությունը:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԵՎ ՏԱՐԱԾԵԼ ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸՄենք սովորաբար օգտագործում և տարածում ենք Ձեր առողջության

տվյալները ետևյալ դեպքում, եթե նահանգային կամ դաշնային օրենքները սահմանափակումներ չեն նախատեսում

Բուժման համար: Մենք ձեր առողջության տվյալները օգտագործում ենք՝ ձեզ բուժում կամ առողջապահական ծառայություններ մատուցելու նպատակով: Մենք ձեր առողջության տվյալները տրամադրում ենք այն բժիշկներին, բուժքույրերին,

տեխնիկներին, բժշկական և առողջապահական գիտությունների ուսանողներին կամ այլ առողջապահական աշխատակիցներին, ովքեր պատասխանատու են ձեր խնամքի համար: Մենք կարող ենք փոխանցել ձեր առողջության տվյալները նաև այլ, UC Davis Health-ից անկախ առողջապահական ծառայություն մատուցող այլ կազմակերպություններին՝ ձեր բուժման կամ խնամքի նպատակներով: Օրինակ՝ եթե Ձեզ ուղղորդում են այլ բուժկենտրոն, որը չի պատկանում UC Davis Health-ին, մենք կփոխանցենք համապատասխան տեղեկությունները այդ բուժհաստատությանը:

Վճարման համար:Առողջապահական ապահովագրություններին կամ այլ կազմակերպություններին հաշիվ գրելու կամ վերջիններից վճարում ստանալու նպատակով մենք օգտագործում և կիսվում ենք Ձեր տվյալներով: Օրինակ՝ ձեր առողջության վերաբերյալ տեղեկությունները կարող ենք փոխանցել ձեր առողջապահական ապահովագրությանը, որպեսզի նրանք փոխհատուցեն մեր կողմից մատուցած ծառայությունների վճարը:

Առողջապահական համակարգի գործունեության համար: Մենք օգտագործում և կիսվում ենք Ձեր առողջության վերաբերյալ տվյալներով՝ բուժումն ու սպասարկումը կառավարելու, մեր բիզնեսի և ուսումնական հաստատության գործունեությունը կազմակերպելու, Ձեր խնամքը բարելավելու և անհրաժեշտության դեպքում Ձեզ հետ կապ հաստատելու համար: Օրինակ՝ Ձեր առողջության վերաբերյալ տվյալները կարող են օգտագործվել մեր ծառայությունների որակը և անվտանգությունը գնահատելու, բիզնեսի պլանավորման, կառավարման և վարչական ծառայությունների համար:

Մենք կարող ենք նաև կիսել ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությունը մեր հետ համագործակցող ոչ UC Davis Health կազմակերպությունների հետ, որոնք մեզ մատուցում են այլ ծառայություններ, օրինակ՝ հավատարմագրման, իրավաբանական կամ աուդիտորական: Այս կազմակերպությունները օրենքով պարտավոր են պահպանել ձեր առողջության վերաբերյալ տվյալների գաղտնիությունը:

Ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվության փոխանցման այլ եղանակներ: Ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությունը կարող է նաև փոխանցվել այլ կերպ՝ օրենքով թույլատրված կամ պարտադրված եղանակներով, սովորաբար այնպիսի նպատակներով, որոնք օգտակար են հանրությանը, օրինակ՝ հանրային առողջության պահպանության կամ հետազոտությունների համար: Նախքան այդ տվյալները նրանք տրամադրելը, մենք պետք է կատարենք օրենքով սահմանված բազմաթիվ պայմաններ:

Հիվանդանոցային տեղեկագիր համար: Եթե դուք հոսպիտալացվել եք, մենք

կարող ենք ձեր մասին որոշ տեղեկություններ ներառել հիվանդանոցային տեղեկագրում: Սա անհրաժեշտ է, որպեսզի ձեր ընտանիքը, ընկերները և հոգևորականները կարողանան այցելել ձեզ հիվանդանոցում և տեղեկանալ ձեր առողջական վիճակի մասին: Դուք իրավունք ունեք առարկել տեղեկագրում ձեր տվյալների ներառման կամ վերջիններս հրապարակմանը:

Ձեր խնամքին կամ խնամքի համար վճարող անձանց: Մենք կարող ենք կիսվել առողջության վերաբերյալ տեղեկություններով ձեր ընտանիքի անդամների, մտերիմ ընկերների կամ այլ անձանց հետ, որոնք ներգրավված են ձեր խնամքի կամ դրա վճարման գործընթացում:

Առողջության տեղեկությունների փոխանակում համար (Health Information Exchanges - HIE): UC Davis Health-ը կարող է մասնակցել առողջության տվյալների փոխանակման համակարգերի, որտեղ ըստ օրենքի թույլտվության՝ կիսում ենք Ձեր տվյալները մյուս առողջապահական կազմակերպությունների հետ, որպեսզի հեշտացնենք Ձեր բուժումն ու խնամքը տարբեր կենտրոններում:

Եթե չեք ցանկանում, որ UC Davis Health-ը կիսվի Ձեր տվյալներով այս համակարգում, կարող եք հրաժարվել՝ լրացնելով համապատասխան հայտը՝ https://health.ucdavis.edu/him:

Հրաժարվելու հայտը կարող եք ուղարկել՝

Էլ. հասցե՝ hs-roi@ucdavis.edu
Ֆաքս՝ (916) 734-2126
Փոստային հասցե՝ Health Information Management, 2315 Stockton Blvd., Sacramento, CA 95817

UC Davis Health-ը կհամաձայնի ձեր հրաժարվելու («opt-out») խնդրանքին՝ ըստ անհրաժեշտության՝ համապատասխանելու մեզ վերաբերվող օրենքներին: Հրաժարվելը կդադարեցնի UC Davis Health-ի կողմից ձեր տեղեկությունների փոխանցումը այլ առողջապահական ծառայություններ մատուցողներին՝ առողջապահական տեղեկատվության փոխանակման համակարգի (HIE) միջոցով: Սակայն դա չի կանխում այլ առողջապահական ծառայություններ մատուցողներին ձեր տեղեկությունները փոխանցելուց UC Davis Health-ին, և չի արգելում այն ծառայություն մատուցողին, ովքեր արդեն ունեն ձեր տվյալները, պահպանել դրանք: Եթե ցանկանում եք կանխել, որ այլ ծառայություններ մատուցողները ձեր տվյալները չփոխանցեն UC Davis Health-ին, անհրաժեշտ է անմիջապես կապ հաստատել այդ ծառայություններ մատուցողների հետ: Հրաժարման դեպքում կարող եք նորից ընդգրկվել՝ ուղարկելով գրավոր դիմում նույն հասցեներով:

Էլ. փոստ: hs-roi@ucdavis.edu
Ֆաքս: (916) 734-2126
Փոստային հասցե՝
Health Information Management

2315 Stockton Blvd.
Sacramento, CA 95817

Հետազոտություններ համար: UC Davis Health-ը հետազոտական հաստատություն է: Հետազոտողները կարող են կապ հաստատել Ձեզ հետ՝ առաջարկելով մասնակցել որոշ հետազոտական ծրագրերում և որոշ դեպքերում կարող են մասնակցել այդ հետազոտություններին կամ մենք կարող ենք կիսվել Ձեր տվյալներով առանց Ձեր թույլտվության, եթե հետազոտությունն անցել է հատուկ վերանայման գործընթաց՝ ապահովելու հիվանդի տվյնաների գաղտնիությունը:

Ներքին օրգանների և հյուսվածքների նվիրատվություն դեպքում: Եթե Դուք հանդիսանում եք որևէ ներքին օրգանի դոնոր, մենք կարող ենք կիսվել Ձեր առողջության տվյալներով դոնորական օրգանների ձեռքբերման կազմակերպությունների հետ:

Դիահերձողներ, դատաբժշկական փորձագետներ և հուղարկավորության կազմակերպություններին: Մենք կարող ենք կիսվել բժշկական տեղեկություններով դիահերձողի, դատաբժշկական փորձագետի կամ հուղարկավորության կազմակերպության ներկայացուցիչների հետ, երբ անձը մահանում է: Սա կարող է անհրաժեշտ լինել, օրինակ՝ մահացած անձին նույնականացնելու կամ մահվան պատճառը որոշելու համար:

Աղետի հետևանքների վերացման ուղղված գործողություններ ժամանակ: Մենք կարող ենք կիսվել ձեր առողջական տեղեկություններով այն կազմակերպության հետ, որը մասնակցում է աղետի հետևանքների վերացման ուղղված աշխատանքներին, որպեսզի մյուսներին կարողանանք տեղեկացնել ձեր առողջական վիճակի, կարգավիճակի և գտնվելու վայրի մասին:

Դրամահավաքային ծրագրերի ժամանակ: Մենք կարող ենք օգտագործել Ձեր տրամադրած տվյալները՝ կապ հաստատելու Ձեր հետ՝ դրամահավաքի ծրագրերի և միջոցառումների համար: Դուք կարող եք հրաժարվել ստանալու ծանուցումներ դրամահավաքի վերաբերյալ զանգահարելով՝

Հետևյալ եռախոսահամարին ՝ 916-734-9400

կամ՝

Փոստային հասցե՝
Health Sciences Development
4900 Broadway, Suite 1150
Sacramento, CA 95820

Առողջապահական տեղեկություններ և հանդիպումների մասին հիշեցումների ժամանակ: Մենք կարող ենք կապ հաստատել Ձեզ հետ՝ հիշեցնելու, որ UC Davis Health-ում ունեք նշանակված հանդիպում: Ինչպես նաև կարող ենք տեղեկացնել Ձեզ բուժման այլընտրանքային տարբերակների կամ մեր կազմակերպության առավելությունների կամ մեր տրամադրած այլ ծառայությունների մասին:

Օրենքով սահմանված դեպքերում: Մենք պետք է տրամադրենք Ձեր առողջության վերաբերյալ տեղեկությունները, երբ դա պահանջվի ֆեդերալ կամ նահանգային օրենքներով: Օրինակ՝ կարող ենք կիսվել Ձեր առողջության վերաբրեյալ տվյալներով Առողջապահության և սոցիալական ծառայությունների վարչության հետ՝ հավաստելու համար, որ մենք հետևում ենք ֆեդերալ գաղտնիության օրենքի պահպանման կանոնները:

Դատարանային և իրավական գործերի հետ կապված գործողություններին պատասխանելու դեպքում: Մենք կարող ենք կիսվել ձեր առողջության վերաբերյալ տեղեկություններով՝ դատարանի կամ վարչական հրամանի պանաջով, ինչպես նաև եթե անհարաժեշտություն առաջանա պատասխանել նրաց կոմից ուղարկված նախազգուշացմանը:

Զինվորականներ և վետերաններ: Եթե Դուք զինված ուժերիանդամ եք կամ նախկինում եք եղել զինված ուժերի անդամ, ապա մենք կարող ենք տրամադրել Ձեր առողջության տվյալները զինվորական իշխանություններին՝ օրենքով սահմանված կարգով:

Բանտարկյալներ: Եթե Դուք գտնվում եք քրեակատարողական հիմնարկում կամ իրավապահ մարմինների հսկողության տակ եք, կարող ենք տրամադրել Ձեր առողջության տվյալները համապատասխան հիմնարկին՝ օրենքով թույլատրված կամ պահանջված կարգով:

Աշխատակիցների փոխհատուցման շրջանակներում: Մենք կարող ենք օգտագործել կամ փոխանցել ձեր առողջական տեղեկությունները աշխատակիցների փոխհատուցման կամ նմանատիպ ծրագրերի շրջանակում՝ օրենքով թույլատրված կամ պահանջված դեպքերում: Այս ծրագրերը նախատեսված են նպաստներ

տրամադրել այն մարդկանց, ովքեր աշխատանքի հետևանքով վնասվածքներ կամ հիվանդություններ են ձեռք բերել:

Հանրային առողջապահություն և անվտանգություն: Որոշ իրավիճակներում մենք կարող ենք ձեր առողջության վերաբերյալ տեղեկությունները տրամադրել համապատասխան պետական կամ առողջապահական մարմիններին՝ հանրային առողջության և անվտանգության ապահովման նպատակով:
Այսպիսի դեպքերը կարող են ներառել հետևյալ իրավիճակները՝

- Հիվանդությունների (օրինակ՝ քաղցկեղ, թոքաբորբ),վնասվածքների կամ հաշմանդամության կանխարգելում կամ վերահսկում,
- կենսական իրադարձությունների հաշվետվություն (ծնունդներ, մահեր),
- ենթադրյալ բռնության, անպատասխանատվության կամ ընտանեկան բռնության վերաբերյալ հաղորդման դեպքում,
- ցանկացած անձի առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգը կանխելու կամ նվազեցնելու նպատակով,
- սննդամթերքի, դեղորայքի կամ արտադրանքի թերությունների կամ խնդիրների հետ կապված բացասական իրադարձությունների և վերահսկողության տվյալների հաղորդման դեպքում,
- տեղեկացնել անձանց, ովքեր կարող են օգտագործել հետկանչվող, վերանորոգվող կամ փոխարինվող ապրանքներ,
- տեղեկացնել այն անձին, ով կարող էր շփվել հիվանդության աղբյուրի հետ կամ գտնվում է հիվանդությամբ վարակվելու կամ այն տարածելու վտանգի տակ,
- աշխատավայրում տեղի ունեցածի հետրանքով աշխատողին լուրջ վնասվածք ստանալու կամ աշխատավայրում վերջինիս մահվան դեպքում օրենքով պահանջվող հաշվետվություն ներկայացնելու նպատակով գործատուին սահմանափակ տեղեկատվություն տրամադրել,
- գործատուին սահմանափակ տեղեկատվություն տրամադրել՝ օրենքով պահանջվող հաշվետվություններ ներկայացնելու նպատակով, որոնք վերաբերում են աշխատավայրի բժշկական հսկողությանը կամ

աշխատանքային հիվանդություններին և վնասվածքներին, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու վերահսկմանը:

Առողջապահական վերահսկողության գործունեություն: Մենք կարող ենք ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել պետական, լիցենզավորման, աուդիտի և այլ գործակալությունների՝ օրենքով սահմանված կամ թույլատրված դեպքերում:

Իրավապահ մարմիններ: Օրենքով թույլատրված կամ պահանջված դեպքում, որոշակի պայմանների առկայությամբ, կարող ենք տրամադրել Ձեր առողջության տվյալները իրավապահ մարմիններին:

Ազգային անվտանգության և հետախուզական գործունեություն: Օրենքով սահմանված դեպքերում մենք կարող ենք ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել պետական հատուկ գործառույթների իրականացման նպատակով, ինչպիսիք են ազգային անվտանգության ապահովումն ու նախագահական պաշտպանության ծառայությունները:

Առողջության տեղեկատվության մարկետինգը կամ վաճառքը: Ձեր առողջության վերաբերյալ տեղեկատվության մեծ մասը մարկետինգային նպատակներով օգտագործելն ու տարածելը կամ դրա վաճառքը խիստ սահմանափակ է և կարող է իրականացվել միայն ձեր գրավոր համաձայնությամբ:

Առողջության մասին տվյալների օգտագործման և հրապարակման այլ դեպքեր: Այլ դեպքերում, որոնք նշված չեն սույն ծանուցագրում, մենք իրավասու կլինենք օգտագործել կամ հրապարակել ձեռ առողրջության մասին տվյլաները միայն Ձեր գրավոր համաձայնությամբ: Եթե դուք մեզ թույլատրում եք օգտագործել կամ հրապարակել ձեր առողջության տվյալները, կարող եք ցանկացած պահի գրավոր կերպով չեղարկել այդ համաձայնությունը: Այնուամենայնիվ, չեղարկումը չի տարածվում այն տեղեկատվության վրա, որը մենք արդեն օգտագործել և հրապարակել ենք նախորդ համաձայնության հիման վրա:

Հատուկ օրենսդրական կանոններ տարածվում են որոշ առողջության տվյալների վրա, որոնք համարվում են հիվանդի համար հատկապես գաղտնի կամ զգայուն:

Այսպիսի զգայուն տեղեկատվությունը ներառում է հոգեբանական խորհրդատվության նշումներ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման բուժման գրառումներ, հոգեկան առողջության տվյալներ և ՀԻՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվություն: Օրենքով պահանջված դեպքերում մենք այս տեսակի տեղեկատվությունը չենք

տրամադրի առանց ձեր գրավոր համաձայնության: Որոշ իրավիճակներում անչափահասների առողջության տվյալները ենթակա են հավելյալ պաշտպանության:

Թմրամիջոցների և ալկոհոլի կախվածության բուժման գրառումներ: Ձեր թմրամիջոցների կամ ալկոհոլի բուժման հետ կապված գրառումները պաշտպանվում են հատուկ դաշնային օրենքով (42 U.S.C. § 290dd-2 և 42 CFR Մաս 2): Այդ օրենքը կարող է պահանջել, որ այս տեղեկությունները պահպանվեն ավելի խիստ գաղտնիությամբ, քան մյուս բժշկական տեղեկությունները:

Օրենքի պահանջով՝ մենք չենք կարող օգտագործել կամ հրապարակել Ձեր թմրամիջոցների և ալկոհոլի բուժման վերաբերյալ գրառումները Ձեր դեմ դատական, վարչական կամ օրենսդրական վարույթում առանց Ձեր նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է դատարանի որոշում, որը պահանջում է դա:

Օրենքի պահանջով՝ մենք կարող ենք օգտագործել Ձեր թմրամիջոցների և ալկոհոլի բուժման գրառումները դրամահավաքի նպատակներով միայն այն բանից հետո, երբ Ձեզ հնարավորություն է տրվել հրաժարվել դրամահավաքի վերաբերյալ տեղեկություններ ստանալուց: Հրաժարվելու կարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է վերևում՝ «Դրամահավաքի գործունեություն» բաժնում:

UC DAVIS HEALTH-Ի ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՅՍ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք ցանկացած պահի կարող ենք փոփոխել այս ծանուցման պայմանները, և փոփոխությունները կկիրառվեն ձեր վերաբերյալ մեր ունեցած բոլոր առողջության տվյալների վրա: Այս ծանուցումը կարող եք տեսնել մեր մասնաճյուղերում կամ մեր կայքում՝ ցանկացած պահի:

Կազմակերպված Առողջապահական Գործողություններ: UC Davis Health-ը մասնակցում է Կազմակերպված Առողջապահական Գործողության (OHCA)՝ այլ առողջապահական ծառայութենուններ ապահովողների հետ: OHCA-ի շրջանակում անդամ կազմակերպությունները կարող են կիսվել ձեր առողջության տվյալներով՝ բուժման, վճարման կամ OHCA-ին վերաբերող գործունեության նպատակներով:

ՀԱՐՑԵՐ ԿԱՄ ԲՈՂՈՔՆԵՐ

Եթե ունեք հարցեր կամ մտահոգություններ այս ծանուցման վերաբերյալ, խնդրում ենք դիմել UC Davis Health-ի Գաղտնիության Ծրագրին, Համապատասխանության և Գաղտնիության Ծառայությունների բաժին՝ (916) 734-8808 հեռախոսահամարով: Եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են, կարող եք ներկայացնել բողոք UC Davis Health-ին.

Հարցման թեժ գիծ՝ (877) 384-4272
Փոստով՝UC Davis Health
Համապատասխանության և Գաղտնիության
Ծառայությունների բաժին
1651 Alhambra Blvd.
Sacramento, CA, , 95816

Դուք նաև կարող եք ներկայացնել բողոք ԱՄՆ Առողջապահության և Սոցիալական Ծառայությունների Նախարարության քաղաքացիական իրավունքների գրասենյակին: Բողոք ներկայացնելու դեպքում դուք չեք ենթաչկվի որևէ պատասխանատվության:

Կատարման Ամսաթիվ՝ Ապրիլ 1, 2023

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

UC Davis Health-ը անվճար տրամադրում է համապատասխան լրացուցիչ օգնական միջոցներ, որակավորված նշանալեզվի թարգմանիչներ և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց՝ արդյունավետ հաղորդակցության համար: Մենք նաև տրամադրում ենք գրավոր տեղեկություններ այլ ձևաչափերով (մեծ տառաչափով, ձայնային, մատչելի էլեկտրոնային ձևաչափեր և այլ): UC Davis Health-ը նաև անվճար լեզվական ծառայություններ է տրամադրում, ներառյալ որակավորված թարգմանիչներ այն անձանց համար, ում մայրենի լեզուն անգլերենը չէ: Այս ծառայություններից օգտվելու համար խնդրում ենք կապ հաստատել Հիվանդների հետ կապի համակարգողի հետ՝ 1-916-734-2321 (TTY: 1-916-635-3061):

Գաղտնիության Ծրագրի Ծանուցման Հասանելի Լեզուները

- Իսպաներեն
- Չինարեն
- Վիետնամերեն
- Պարսկերեն (Ֆարսի)
- Ռուսերեն
- Արաբերեն
- Լաո
- Պունջաբերեն
- Տագալոգ
- Կորեերեն
- Հայերեն
- Մոն-Խմեր
- Կամբոջերեն
- Հմոնգ
- Հինդի
- Թայլանդերեն